ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/12/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունվարի 31-ին քննելով «ԱՍ ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) տնօրեն Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/12/2025 վարչական գործը

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով վերապահված գործառույթը, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ

Ընկերության անունից Կուսակցությանը կատարվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված չթույլատրված նվիրատվություն, այն է՝

Ընկերության անունից 2023 թվականի օգոստոսի 3-ին Կուսակցության բանկային հաշվին կատարվել է փոխանցում՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Վերոգրյալը հայտնաբերվել է նաև «Թրասթ աուդիտ» ՓԲ ընկերության կողմից աուդիտորական եզրակացությամբ (այսուհետ՝ Աուդիտորական եզրակացություն):

1.2 Վերոնշյալ իրավախախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 31-ին թիվ 01/3470-2024 գրությամբ Գագիկ Բաղդասարյանին է ուղարկել ծանուցում՝ իրավաբանական անձի անունից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու առերևույթ իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ ծանուցումը ստանալուն հաջորդող 7-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Գագիկ Բաղդասարյանը նշված գրությունը ստացել է 2024 թվականի նոյեմբերի 5-ին (հիմք՝ AL012136352M հետադարձ հանձնման ծանուցագիր):

1.3 2024 թվականի նոյեմբերի 7-ին Ընկերության տնօրեն Գագիկ Բաղդասարյանի ներկայացուցիչ՝ Անի Հակոբյանի կողմից էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով թիվ 1308907 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել առարկություն:

1.4 2024 թվականի նոյեմբերի 14-ին պատշաճ ծանուցված Գագիկ Բաղդասարյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/734/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 2025 թվականի հունվարի 8-ին թիվ 01/38-2025 գրությամբ Գագիկ Բաղդասարյանին է ուղարկել ծանուցում՝ վերջինիս 2025 թվականի հունվարի 17-ին, ժամը 16:00 հրավիրելով Հանձնաժողով Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար:

1.6 Վերոնշված գրությունը Գագիկ Բաղդասարյանը չի ստացել, ինչով պայմանավորված 2025 թվականի հունվարի 17-ին Հանձնաժողովը կայացրել է վարչական իրավախախատման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին թիվ ՎԻՎ/12/2025-1 որոշումը:

1.7 2025 թվականի հունվարի 21-ին թիվ 01/296-2025 գրությամբ Գագիկ Բաղդասարյանին է ներկայացրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին թիվ ՎԻՎ/12/2025-1 որոշումը, միաժամանակ հրավիրելով 2025 թվականի հունվարի 31-ին, ժամը 14:30-ին վարչական իրավախախատման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Նշված գրությունը Գագիկ Բաղդասարյանին ուղարկված լինելու փաստը հաստատվում է LO126264382AM փոստային անդորրագրով, սակայն հետադարձ հանձնման ծանուցագիրը, ինչպես նաև ուղարկված ծրարը Հանձնաժողով չի վերադարձվել:

1.8 Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 22-ին իրականացրել է հրապարակային ծանուցում՝ ծանուցումը տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

1.9 2025 թվականի հունվարի 31-ին կասեցված վարչական վարույթը վերսկսվել է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթների համաձայն պատշաճ ծանուցված Գագիկ Բաղդասարյանի բացակայությամբ տեղի է ունեցել թիվ ՎԻՎ/12/2025 վարչական իրավախախատման վերաբերյալ գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի նոյեմբերի 7-ին Գագիկ Բաղդասարյանի ներկայացուցչի կողմից Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 01/3470-2024 գրությամբ վկայակոչված առերևույթ իրավախախտման վերաբերյալ ներկայացվել է գրավոր առարկություն հետևյալ բովանդակությամբ՝

Մեջբերում. «(…) հարկ ենք համարում նշել, որ փոխանցումը կատարվել է Ընկերության հաշվեհամարից, սակայն 03.08.2024թ. թիվ 93 համացանցի միջոցով կատարված փոխանցման համաձայն, որպես Շահառու նշվել է Կուսակցությունը, իսկ նպատակ բաժնում նշվել է, որ նվիրատվությունը/օգնություն դրամաշնորհը կատարվել է Հովսեփ Աղազարյանի անունից, ով հանդիսանում է ֆիզիկական անձ և որևէ արգելք, առավել ևս Օրենքի խախտում չէր կարող լինել սույն դեպքում:

Բացի այդ վկայակոչված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով խոսքը գնում է կուսակցությունների իրավունքների մասին, որից բխում է նաև վերջիններիս պարտականությունը, հետևաբար երրորդ անձանց՝ այդ թվում՝ իրավաբանական անձանց կողմից կատարվող արարքը չի կարող գնահատվել նշված հոդվածի իրավակարգավորումներով, քանի որ նշված հոդվածով բացառապես կարգավորում են որպես իրավունքի սուբյեկտ՝ բացառապես «կուսակցության» իրավունքների և պարտականությունների հարցը:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով Փոխանցումը՝ ավելի քան ակնհայտ է դառնում, որ որպես Շահառու հանդես է գալիս Կուսակցությունը, այլ ոչ թե Ընկերությունը, առավել ևս ֆիզիկական անձը, և սույն դեպքում առնվազն անհասկանալի է, թե ինչու պետք է վարչական պատասխանատվության ենթարկվի Ընկերությունը, եթե վերջինս չի հանդիսանում տվյալ փոխանցմամբ Շահառու:

Անդրադարձ կատարենք նաև «Վարչական իրավախախատման վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.21-րդ 1-ին մասին, համաձայն որի իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

Նախ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել, թե նշված հոդվածով տուգանքի նշանակումը ում նկատմամբ է կիրառվելու՝ Ընկերության թե Կուսակցության, որի մասով առկա է օրենքի բաց, թե երկուսի հանդեպ միաժամանակ:

(…) Բացի այդ, եթե Հանձնաժողովն առաջնորդվել է և Կուսակցությանը և Ընկերությանը միաժամանակ տուգանելու քաղաքականությամբ, ապա առկա է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արգելք, մասնավորապես նույն խատման համար չի

կարող կիրառվել վարչական պատասխանատվություն երկու անգամ, առավել ևս առկա չեն վարչական իրավախախտման փաստը հաստատող վերաբերելի և թույլատրելի ապացույցներ/իրավական հիմքեր:

Ուստի ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ բացակույում է վարչական իրավախախտում կատարելու փաստը, որի պայմաններում ներկայացնում ենք սույն առարկությունները և խնդրում դրանք ներառել կայացվելիք արձանագրության մեջ:» մեջբերման ավարտ:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/12/2025 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 2023 թվականի օգոստոսի 3-ին «ԱՍ ՇԻՆ» ՍՊ ընկերության անունից Կուսակցությանը կատարվել է 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություն (չթույլատրված նվիրատվություն):

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանը հաշվետու ժամանակահատվածում (23.12.2022թ.-ից առ այսօր) հանդիսացել է Ընկերության գործադիր մարմնի ղեկավար:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական

միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, **բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:**

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ (…), **ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից,** այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, (…):

4.6 Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

4.7 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.9 «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն **Ընկերության գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը, նախագահը և այլք)** ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության գործադիր մարմինը՝ **առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ**:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների

վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.13 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.14 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը

կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների և կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը**: Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից մուտքերը սահմանափակելով Օրենսդիրը նպատակ է ունեցել բացառել քաղաքականության մեջ բիզնեսի հնարավոր ազդեցությունները: Այս առումով, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների, այդ թվում՝ բնեղենով նվիրատվությունների արգելքն արդյունավետ միջոց է բիզնեսի ազդեցությունը քաղաքականության վրա սահմանափակելու համար: Որոշակի խմբային կամ կորպորատիվ շահերից կուսակցությունների կախվածությունը բացառելու նպատակով Օրենսդիրը սահմանել է ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից նվիրատվությունների արգելք, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ Սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը, իսկ իրավաբանական անձանցից նվիրատվությունների անմիջական արգելքի միջոցով Օրենսդիրը նպատակ է ունեցել նպաստել քաղաքական ֆինանսավորման հաշվետվողականությանն ու հրապարակայնությանը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են իրավաբանական անձանց ներդրումները, ինչը

խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը: Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից կուսակցություններին նվիրատվություններ կատարելն օրենսդրությամբ արգելելու հիմքում դրված է քաղաքական գործընթացների վրա իրավաբանական անձանց ազդեցությունը չեզոքացնելու օրենսդրի նպատակը, քանի որ իրավաբանական անձինք հաճախ ունենում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք քաղաքականության մեջ օգտագործվելիս հանրային շահի փոխարեն հանգեցնում են այդ կազմակերպությունների շահերի սպասարկմանը: Բացի այդ, վերը նշված կարգավորման արդյունքում ապահովվում է, որ կուսակցություններն ավելի շատ ակնկալեն անհատների՝ ֆիզիկական անձանց աջակցությանը, ինչն ենթադրում է հանրության աջակցություն կուսակցության վարած քաղաքականությանը կամ գաղափարախոսությանը: Մյուս կողմից, վերը նշված արգելքների բացակայության պայմաններում հասարակությունն ընկալում է, որ կուսակցությունները մեծապես ֆինանսավորվում են իրավաբանական անձանց կողմից, ինչն էլ, իր հերթին, կարող է խաթարել վստահությունը քաղաքական համակարգի նկատմամբ:

Միաժամանակ, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Գագիկ Բաղդասարյանի ներկայացուցչի կողմից գրավոր առարկությամբ ներկայացված փաստերին և իրավական հիմնավորումներին, և գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ հիմքերով և հիմնավորումներով.

Հանձնաժողովը անդրադառնալով ներկայացուցչի կողմից վկայակոչված այն փաստարկին, որ չնայած նրան, որ փոխանցումը կատարվել է Ընկերության հաշվեհամարից և որպես շահառու նշվել է Կուսակցությունը, այդուհանդերձ նպատակ բաժնում նշվել է, որ նվիրատվությունը/օգնությունը դրամաշնորհը կատարվել է ֆիզիկական անձ Հովսեփ Աղազարյանի անունից, իսկ օրենսդրությամբ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար որևէ արգելք չկա, անհրաժեշտ է համարում նշել, որ փոխանցումը կատարվել է «ԱՍ ՇԻՆ» ՍՊ ընկերության անունից, վերջինիս «[redacted] ԲԲ ընկերությունում առկա հաշվեհամարից և նման պայմաններում միայն գործարքի «Մանրամասներ» բաժնում «նվիրատվություն/օգնություն դրամաշնորհ Հովսեփ Աղազարյան» նշումը չի կարող վկայել փոխանցումը Հովսեփ Աղազարյանի կողմից կատարված լինելու մասին, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն Ընկերության անունից հանդես գալու և գործարքներ կնքելու լիազորությունը վերապահված է միայն Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին:

Ինչ վերաբերում է ներկայացուցչի կողմից նշված այն հանգամանքին, որ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն կրող սուբյեկտն անորոշ է, պարզ չէ, թե ում նկատմամբ է պետք է կիրառվի պատասխանատվությունը՝ Ընկերության, թե Կուսակցության, այսինքն առկա է օրենքի բաց, ապա հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի կարգավորումները, մեկնաբանելով վերոնշված իրավական նորմը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ակնհայտ է, որ նշված նորմով սահմանված վարչական պատասխանատվությունը՝ տույժը, կիրառվում է իրավաբանական անձի անունից նվիրատվություն կատարած անձի նկատմամբ, այսինքն

այն անձի նկատմամբ, ով օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի իրավաբանական անձի անունից հանդես գալու և գործարքներ կնքելու: Միաժամանակ, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով սահմանվում է կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու վարչական իրավախատաման զանցակազմը և դրա նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը: Այսինքն, քննարկվող իրավախախատման դեպքում գործող օրենսդրությամբ հստակ սահմանված են և՛ իրավաբանական անձի անունից հանդես եկող անձին, և՛ կուսակցությանը վարչական պատասխանատվության ենթարկելու իրավակարգավորումները:

Ինչ վերաբերում է Ներկայացուցչի կողմից արտահայտած այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ Օրենսգրքի 189-21-րդ հոդվածի բովանդակությունից պարզ չէ, թե ում նկատմամբ պետք է կիրառվի պատասխանատվությունը՝ Ընկերության թե Կուսակցության, և եթե Հանձնաժողովը առաջնորդվել է և Կուսակցությանը և Ընկերությանը միաժամանակ տուգանելու քաղաքականությամբ, ապա առկա է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արգելք, մասնավորապես նույն խախտման համար չի կարող կիրառվել վարչական պատասխանատվություն երկու անգամ, ապա Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ եթե ներկայացուցչի կողմից արտահայտած դիրքորոշումը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածով սահմանված կրկնակի դատվելու արգելքին, այն է՝ ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար, այսնիքն նույն անձին, նույն արարքի համար պատասխանատվության ենթարկելու սահմանադրական արգելքին, ապա անհրաժեշտ ենք համարում նշել, որ քննարկվող իրավիճակում կրկնակի դատվելու/վարչական պատասխանատվության երթակրվելու դեպքը բացակայում է, քանի որ Ընկերության տնօրեն՝ Գագիկ Բաղդասարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը իրականացվում է Օրենսգիրք 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով, միաժամանակ կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված

ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու վարչական իրավախատումը և դրա նակտմամբ կիրառվող պատասխանատվությունը սահմանվում են Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով, այսինքն՝ զանցակազմերը տարբեր են:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ սույն գործով կատարված արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտմամբ, խաթարվել է նշված նորմով Օրենսդրի կողմից վերը նշված հետապնդվող նպատակը, քանի որ իրավաբանական անձի անունից կատարվող նվիրատվության արդյունքում չեն պահպանվել Կուսակցությանն օրենքով չթույլատրված նվիրատվություններ կատարելուն ներկայացվող պահանջները:

Վերոշարադրյալի արդյունքում սույն գործով իրավաբանական անձի կողմից խախտվել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջը՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է Ընկերության տնօրեն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձ ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է իրավաբանական անձի անունից կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափով տուգանքի նշանակում, սույն դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափը կազմում է 500,000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՍ ՇԻՆ» ՍՊ Ընկերության անունից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար Ընկերության տնօրեն Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ նվիրատվության գումարի չափով՝ **500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:**

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Ռազմիկի Բաղդասարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ